Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lmy
705

2009

372

2783
~~№ 839~~ ~~№ 99~~ ~~№ 25~~ 372
705
23 JUN 2005

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՏՈՐՔ—ԱՆԳԵՂ

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՒՇ—ԳԵՂԵՑԻԿ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵՏՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1888

№ 839. № 99. № 105 372

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՏՈՐՔ—ԱՆԳԵՂ

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՒՇ—ԳԵՂԵՑԻԿ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

„ԱՂԲԻՒՐ“ ԱՄԻՍՈՅԻ ԱՐՏԱՏՊԱԾ

ՄԱՅԱՐԵՔԻՆ ՄՈՍԿՈՎՍԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* ВОСТОЧНАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА *

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 1|2.
1868

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ-ССР Аз
Մ. Մ. Աշտարակ
705-2009
(3150/41)
Հ 703

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Марта 1888 г.

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.
ԱԿ. Ա. ՄԱՍՈՒՆՅԱՆ
И. Масуняна
3150
41

Типографія И. Мартиросіанца, Орбел. ул., д. 1/2



ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բացուել էր գարունը, ջրերը պղտորուել,
Սար ու ձոր կանաչել, ծաղկով զարդարուել.
Ծիծեռը գտել է իւր բունը հերուան,
Շինում էր, կարկատում, դնում նոր ձուան.
Օձը տաքացել էր, թողել էր իւր բուն,
Սոխակն սպասում էր վարդի բացուելուն.
Դուզարաց աշխարհը նոր կեանք էր առել,
Լոքի ու Լալուարի ձիւները հալուել.
Գետը Բողնոփորի վաղ արշալուսին,
Յորդացած վազում է փրփուրն երեսին.
Անտառում Ուփրէթը՝ ամրոցն Արամեան,
Զուքուել, զարդարուել է նոր-Հարսի նման.
Բուրգերից խնդութեան արցունք է հոսում,
Կարծես սիրակարօտ հիւրի է սպասում.
Ամրոցի տիրուհին՝ հքնաղն ՀԱՅԿԱՆՈՒՇ,
Դեռ փափուկ անկողնում քնած է մուշ-մուշ.

Տեսնում է երազում մի մարդ ածգահա,
Մի գերան ուսին դրած՝ գալիս է ահա.
Գալիս է ածգահան ընկնում ոտքերը,
Ասում է՝ «Հայկանուշ, դու ես իմ սէրը.
Կամ ինձ այս գերանով զարկիր, սպանիր.
Կամ իմ աղաչանքիս լսիր, ընդունիր»։
Վեր կացաւ տիրուհին փափուկ անկողնից,
Ինչպէս մի նոր արև ծովի խորքերից.
Ոսկեմազ ծամերը ճաճանչի նման
Ծածկեցին մինչև ոտք հասակն աննման.
Երեք-չորս նաժիշտներ մօտեցան կուսին,
Տօն օրուայ հագուստով նրան զուքեցին.
Նոր տեսած երազը գրաւել էր նրան,
Աչքից չի հեռանում ահռելի հսկան.
«Մենք շուտով, ասում է, մէկ հիւր կունենանք,
Պէտք է նրա առջև դուռը չբանանք.
Ես տեսայ երազում մի մարդ ահարկու,
Եկել էր ոտքս ընկել իբրև փեսացու»...
—«Այդ հսկան, թէ կուզես իմանալ ճիշտը,—
Ասում է ժպտելով նորա նաժիշտը,—
Երեկուայ գուսանի երգի հերոսն է,
Պասքամեան ածգահա Անգեղեայ Տորքն է.
Պարխարեան լեռներում՝ երգչի ասելով,
Կենում է մի հովիւ քաջ Տորք անունով.
Նա մի շատ յաղթանդամ հսկայ է զօրեղ,
Բայց սիրտը բարի է, թէև դէմքն ահեղ.
(Թող մարդ կոպիտ լինի անհարթ ստրի պէս,
Միայն սիրտը չըլինի անշունչ քարի պէս).
Նրան շատ սիրում են թէ մարդ, թէ գազան,
Առիւծ ու վագրեր են հօտին պահապան.
Նա քո ցեղակիցդ է, քեզ մօտ ազգակից,
Մի պապի թոռներ էք և մէկ արիւնից.

Գուսանի ներբողը ազդել է վրադ,
Երազում տեսել ես ազգակից հսկադ»։
—«Պէտք է պատրաստ կենանք, ինչ էլ որ լինի,
Բերէք մէջքիս կապեմ իմ թուրն հաւլունի.
Ամրոցի դռները ամուր փակեցէք,
Լուացէք զլխները, մաքուր հագնուեցէք.
Ես գիտեմ, երազս պիտի կատարուի,
Մենք հիւրին կընդունենք, եթէ ներս մտնի.
Թէ փակած դռնովը ներս գալ կարենայ,
Այդ նշան կըլինի, որ քաջ Տորքն է նա»։
Իրաւ որ քաջ Տորքն էր երազի հսկան,
Գնանք, իմ ընթերցող, և բերենք նրան։

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1.

Շատ դարեր առաջ Հին Հայաստանում,
Տորք—Անգեղ անուամբ մի մարդ էր կենում։
Տորքը չէր նման հասարակ մարդու,
Այլ մի ածգահա և շատ ահարկու.
Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով,
Ճաճանչաւորուած արևի լուսով.
Սև-սև ունքերը՝ մութ ամպի նման՝
Բարդ-բարդ կուտակուած աչքերի վրան.
Քիթը կորընթարթ, իբրև մի բլուր,
Ատամներն ուրագ, եղունգները թուր.
Կուրծքը կասենաս մի լանջ է լեռան,
Մէջքը սարաժայռ, կռները գերան.
Մի խօսքով մի դէով և ոչ թէ հսկայ,
Ոչ ոք տեսած չէր այնպէս ածգահա։

Տգեղ էր Տորքը և շատ էր տգեղ,
Դրբա համար էլ ասուեցաւ Անգեղ.
Տգեղ էր դէմքը և այնքան դաժան,
Որ զարհուրում էր, ով նայում էր վրան.
Ահռելի էր նա և այնքան ուժեղ,
Որ յլասուն գոմէշ չունէին մէկտեղ.
Նա դեռ պատանի ժայռեր էր ճեղքում,
Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում.
Ճեղքում, յղկում էր քարէ տախտակներ,
Եղունգով փորում պէս-պէս նկարներ:
Նա մի հովիւ էր, հովիւ լեռնական,
Բայց ոչ հասարակ, այլ գիւղացական.
Առիւծ ու վագր նրան տեսնելիս՝
Սովոր շան նման մօտն էին գալիս.
Կարծում էին թէ՝ նա էլ է գազան,
Եւ նա է իրանց զօրաւոր արքան.
Փաթաթվում էին քաջի ոտներին
Եւ կաղկանձելով աղերսում բաժին.
Նա էլ տալիս էր սնունդ բաւական
Եւ հօտի վրայ կարգում պահապան.
Ինքն այնուհետև գնում էր անտառ,
Որ սնունդ գտնի իւր ուժի համար.
Նա պոկոտում էր մեծ ծառեր հատ-հատ,
Ու շինում նրանցից մի մեծ ցանկապատ.
Անտառի շուրջը պարիսպ էր դառնում,
Մէջը վայրենիք կաշկանդուած մնում.
Եւ նա բռնում էր, բռնոտում այսպէս,
Եղնիկ, եղջերու և այլ ինչ ասես:
Քոռն, երեսուն էրէ շալակած,
Գնում էր հօտը յոգնած ու քրտնած.
Առիւծն ու վագրը դէմն էին գալիս,
Քաջի ոտքն ընկնում և բարև տալիս,

Եւ խնդրում էին գիւղացն Տորքին,
Մասնակից անել համեղ ընթրիքին:
Նա չէր շատակեր Զարայի նման,
Սիրում էր կաթը և մածուն ու թան.
Եւ չէր բարկացկոտ, այլ հեզ ու խոնարհ,
Բայց Տէրն ազատէր, թէ որ բարկանար:

2.

Մէկ անգամ գիւղում Տորքին զայրացրին,
«Անգեղ, գէշ Անգեղ», յետքից գոչեցին.
Էլ չըհամբերեց, պոկեց մի մեծ ծառ,
Ուլեց նրանով ամբողջ գիւղն իսպառ.
Ասում եմ ուլեց, չըկարծէք սրբեց,
Այլ տուն, գոմ, մարաք գետնին հաւասարեց.
Փախան մարդիկը ճանճերի նման,
Էլ ով կըկանգնէր Տորքի յանդիման.
Այսպէս երբ նրա բնութիւնն իմացան,
Էլ այնուհետև սրտին չըդիպան,
Այլ մեծ յարգանքով պատուասիրեցին,
Պարերգ շինելով գովաբանեցին.
Տղերք, աղջկերք՝ ձեռք ձեռքի տուած,
Եւ պարում էին, և գովում Տորքին.
Էլ այնուհետև նրա դէմքն ահեղ
Առաջուայ նման չէր թվում անգեղ:
Անգութ չէր Տորքը և ոչ էլ անզէտ,
Լաւ որմնադիր էր և ճարտարապետ.
Ահագին վէմեր նա բերաւ տաշեց
Իւր քանդած գիւղը նորմէկանց շինեց.
Եւ այնուհետև իւր ուժն ահագին
Նա գործ էր դնում միշտ դէպի բարին:

Նրանից առաջ շատ քաղաք ու գիւղ
Թալանում էին գողերն աներկիւղ,
Բայց երբ լոյս ընկաւ Անգեղ Տորք Հսկան,
Աւազակները ծակ ու ծուկ մտան.
Նա չէր գործ ածում ոչ թուր և ոչ նետ,
Միայն իւր տեսքով անում էր անհետ.
Բայց երբ թշնամին երես էր առնում,
Նա այն ժամանակ ուժին էր դիմում.
Վերցնում էր քարեր, քարեր ահագին
Եւ կարկուտի պէս թափում գլխներին։
Սև ծովի կողմից օտար թշնամիք
Թալանում էին և գերում մարդիկ.
Միշտ գալիս էին անթիւ նաւերով,
Այն էլ աշկարա, օրը ցերեկով,
Կողոպտում էին ծովափնեայ գիւղեր,
Եւ գերի տանում սիրուն աղջիկներ։
Մէկ անգամ եկան խնդրեցին Տորքին,
Որ գնայ օգնէ խեղճ ժողովրդին.
Գնաց մեր Հսկան, բայց նաւերն արդէն
Հեռացել էին Սև ծովի ափէն.
Զայրացաւ Տորքը, գոռաց, մռնչաց,
Իրրև մի առիւծ նետահար եղած.
Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց,
Փախչող նաւերի յետքից շրպռտեց.
Դղրդաց ծովը, բարձրացան ալիք,
Նաւերը դարձան շա[illegible]ի խաղալիկ.
Ահա դարձեալ ժայռ, դարձեալ դղրդոց,
Ջրջվում են նաւերն իրրև օրօրոց.
Էլի մէկ բլուր, մեծ քան զառաջինն՝
Ընկնում է ուղիղ նաւերի գլխին.
Գնում են կրկին ժայռերը դունդ-դունդ,
Ջարկվում նաւերին և տանում անդունդ։

Ողջ կորան այսպէս աւազակները,
Դէպի անյատակ ծովի խորքերը.
Նրանցից միայն մէկն ազատուեցաւ,
Գլուխը պատռած՝ իւր երկիրն հասաւ,
Եւ այնտեղ այնպէս հրաշքներ պատմեց,
Որ լսողներին սարսափեցրեց.
Ահա այս անզուգ բարբարոսութեան
Վերջ տուաւ խսպառ մեր զօրեղ Հսկան։

Յ.

Տորքի անունը շատ հռչակուեցաւ,
Մինչև արքայի ականջը հասաւ.
Մեծ թագաւորը կանչում է Տորքին,
Որ պարգևներ տայ և նայէ դէմքին.
Գնում է Տորքը մի ծառ ուսին դրած,
Ֆառի ճղներից էրէներ կախած.
Այնտեղ կար այծեամ ու վայրի ոչխար,
Եղնիկ, եղջերու, վարազ ու կըխտար։
Տորքի համբաւը առաջ էր գնացել
Եւ քաղաքացոց նախապատրաստել.
Խանութ ու կրպակ ողջ կողպոտեցին,
Փողով փողհարով դիմաւորեցին.
«Եկա՛ւ, հա՛ եկա՛ւ, գալի՛ս է, գալի՛ս»,
Ամենքն էլ իրար ի[illegible]ց են տալիս.
Թէ ծեր, թէ մանուկ, թէ աղջիկ, թէ կին,
Եկան տեսնելու նորեկ Հսկային։
Երբ Տորքը մտաւ մեծ մայրաքաղաք,
Նրան կարծեցին շարժուն աշտարակ.
Յիրաւ՝ նա ցած չէր աշտարակներից,
Բուրգ էր նա շինուած անտաշ քարերից։

Փառն ուսին դրած գաւազանի պէս,
Քայլեր է անում չորս կանգուն ու կէս.
Այսպէս նա հասաւ մինչև ապարանք,
Արքայի վրայ ազդեց մեծ զարմանք.
Վայր դրաւ բեռը, բարձրացաւ վերև,
Ծնկաչոք ընկաւ արքայի առջև.
Թագաւորն ասաց, «ապրիս, ապրիս, Տորք,
Դու չես մի հատ մարդ, այլ մի ամբողջ զօրք»։
Արքայի ծունկը Տորքը համբուրեց,
Արքան էլ նրա ուսին ձեռք դրրեց։

4.

Լսել էր արքան, որ հսկայ մարդիկ
Չեն լինում խելօք և ոչ էլ ճարպիկ,
Բայց երբ Տորքի հետ լաւ ծանօթացաւ,
Նա այս կողմանէ մի նոր գիւտ արաւ։
Տորքին նա պահեց մօտ երեք ամիս,
Հետն էր նստեցնում միշտ ճաշ ուտելիս.
—«Ի՞նչպէս ես կարծում,—մէկ օր հարցրեց,—
(Հսկայի խելքը նա փորձել ուզեց)
Ո՞րն է գերազանց, ո՞ւժը, թէ՞ խելքը»։
—«Երկուսն էլ լաւ են», ասաց քաջ Տորքը,
«Փոքրիկ ուժի մէջ չի լինիլ մեծ խելք,
Ոչ էլ ուժեղը կրլինի անխելք.
Բայց ինչ է խելքը,—ոչ ոք չրգիտէ,
Անխելքի համար խելօքն անմիտ է։
Ուրիշ է խելքը գլխապահութեան,
Եւ ուրիշ խելքը յափշտակութեան.
Այդ ամենքն ունին՝ թէ մարդ, թէ գազան,
Թէ խելօք լինի, թէ անմիտ անբան։
Բայց կայ մի այլ խելք, խելք գիւցազնական,

Որ հնարում է, ստեղծում է բան,
Որ մեզ տանում է միշտ դէպի բարին
Եւ մօտեցնում Արարչի գահին,
Որ բանեցնում է օդին ու ջրին,
Փառաւեցնում կրակին, հողին,
Ձինում է զութան, կամն ու ճախարակ,
Հերկում, մշակում դաշտ ու ագարակ,
Որ քարին, փայտին տալիս է նոր ձև,
Նոր գործադրութիւն, և այն յարատև.
Այս է ճշմարիտ խելքն իմ կարծիքով,
Մարդը գազանից վեհ է միայն սրանով»...
Զարմացաւ արքան, այլ և հիացաւ,
Երբ հսկայ Տորքից այս բանն իմացաւ։

5.

Մէկ օր էլ արքան տեսաւ մեր Տորքին՝
Մէկ բլրաչափ ժայռ բռնել է ձեռքին,
Ահագին ժայռը շուռ-մուռ է տալիս,
Կարծես երեխայ լինի խաղցնելիս.
Ժայռը ճեղքում էր Տորքը ձեռքերով,
Փորում, փորփրում սուր եղունգներով.
Փորեց, փորփրեց, տաշեց, տաշտրշեց,
Վերջն արքայի պէս մի արձան շինեց.
Եւ ինչքա՜ն նման, ինչքա՜ն գեղեցիկ,
Ոչն այնպէս կարել չէր կարող դերձիկ.
Արքա՜ն կատարեալ,—ծիրանի հագած,
Բոլոր զարդերով զուքուած, զարդարուած,
Գահի վրայ բազմած, թագը դրած գլխին,
Թուրը քաշ արած, գաւազան ձեռքին,
Փառահեղ մրրքով, մարգարտով հիւսած,
Երբ տեսաւ արքան, մնաց հիացած։

6.

«Այս ի՞նչ հրաշք է», մէկ օր էլ արքան,
Տորքին նայելով՝ ասաց ինքն իրան.
«Փիղը խելօք է, թէև ահագին,
Բայց ո՞վ կըկարծէ, որ այս հսկային
Աստուած տուել է և՛ խելք և՛ հասակ,
Այլ և նկարչի հրաշալի ճաշակ.
Արդեօք՝ սէր էլ կա՞յ այս մարդու սրտում,
Բայց ո՞վ կըսիրէ սրան աշխարհում.
Ո՞րտեղ կըգտնուի այնպիսի մի կին,
Որ ուզի դառնալ սորան ամուսին.
Բայց լաւ կըլինէր, եթէ յաջողէր,
Մենք կունենայինք քաջ հպատակներ»:
Այսպէս մտածեց արքան ինքն իրան
Եւ կանչեց Տորքին, որ խօսեցնէ նրան:
—«Տո՛րք,—ասաց արքան,—ես չեմ հաւատում,
Որ սէր ունենաս քո կարծրը սրտում»:
Փղտաց մեր հսկան, ինչպէս մի ծծկեր,
Երբ մօրից լսէր, թէ արի ծիծ կեր,
Եւ սրտի սէրը իւր վառ կայծերով
Փռուեց երեսին վարդի թերթերով:
—«Իսկ ես, արքայ քաջ, ասաց մեր հսկան,
Ինձ որ ասէին, թէ կայ մի զաղան,
Մի օձ, մի ծաղիկ, կամ մի անշունչ քար,
Չէի հաւատալ, որ սէր չունենար.
Երկինք ու գետինք, թէ ցամաք, թէ ծով,
Բոլոր տիեզերք լցուած է սիրով»:
—«Տորք, դու խօսում ես իբրև սիրահար,
Ընտրե՛լ ես անշուշտ մէկին քեզ համար»:
—«Ո՞ւմ պէտք է ընտրեմ յարմար իմ սրտին,
Ես դեռ չեմ գտել ինձ նման մէկին.

Չեռու աշխարհում մեր սերնդից կան,
Բայց ես չըգիտեմ այն երկրի ճանպան.
Մէկին տեսնում եմ այնտեղ երազում,
Որպէս թէ մի խոր ձորում է կենում.
Ինձ նման անբախտ, ինձ նման մենակ,
Բայց ոչ ինձ նման անզեղ, այլանդակ.
Նա գեղեցիկ է և շատ գեղեցիկ,
Ինչպէս նոր ծագած կարմիր արևիկ»:
—«Բայց՝ ի՞նչ ես կարծում՝ այդ գեղեցկուհին
Կըդառնա՞յ արդեօք քո ընկերուհին»:
—«Նա ինձ երազում հաստատ խօսք տուաւ,
Եւ խոստանալով՝ մի պայման դրաւ.
«Եթէ գաս», ասաց, «կռուես ու յաղթես,
Դու ինձ կըստանաս, կառնես կըբերես».
Հիմա չըգիտեմ՝ ո՞րտեղ կըգտնեմ,
Որ կռուեմ, յաղթեմ ու առնեմ բերեմ»:
—«Ես իմաց կըտամ իմ ըդէշխներին,
Նրանք կըգտնեն քո գեղեցկուհին»:
Տորքն ուրախացաւ, բայց և ամաչեց,
Տգայի նման նա կարմրատակեց.
Արքայի ծնկան նա համբոյր տուաւ,
Եւ իսկոյն հեթ մօտիցը փախաւ.
Թագաւորն ինքն էլ շատ ուրախացաւ,
Որ Տորքի սիրոյ գաղտնիքն իմացաւ:

7.

Արքան հրաւիրեց կուսակալներին,
Որ այդ ժամանակ պալատումն էին,
«Կուզեմ իմանալ, ասաց, մեր երկրում
Ի՞նչպէս ցեղեր կան, ի՞նչպէս են ապրում».

(Թագաւորն ինքը չէր մեր աշխարհից,
Այլ հրաւիրուած մի ուրիշ երկրից).
«Արդեօք մեր երկրում վաղուայ պէս չըկա՞ն
Խոշոր հսկաներ մեր Տորքի նման»։
Ամենից առաջ խօսեց Առանը,
Բաղաց աշխարհի զօրեղ իշխանը.
—«Ո՛ղջ լեր, Թագաւոր, մեր երկրում դեռ կան.
Յաղթանդամ մարդիկ ճիշտ Տորքի նման.
Նրանք կենում են լերանց խորշերում,
Մթին ձորերում և քարայրերում.
Պնդոցն են քաշվում, որ ազատ մնան,
Քեօխվի ու գզրի ոչինչ հարկ չըտան.
Տներ են շինում և գետնի տակին,
Անքար ու անվայտ, սարերի միջին.
Տեսնում ես նաև հարթ գետնի տակից
Թուխ է դուրս գալիս քառասուն տեղից.
Զըշկլվում է մարդ, թէ սա ինչ բան է,
Մի՞թէ սա գիւղ է,—ո՞վ կարծիք կանէ.
Մի դուռն ես դտնում, մտնում և ահա,
Բսան, երեսուն մարդիկ ածդահա,
Մի քանի գերան կրակին դրած,
Նստած են շուրջը մրուրթնին կախած.
Իսկ նրանց մայրը՝ պառաւ ածդահան՝
Դրել է կրակին քառականթ կաթսան,
Երեք-չորս վարազ ողջ-ողջ մէջն ածած,
Ճաշ է պատրաստում մէկ թի ձեռքն առած.
Խառնում է կաթսան թիաշերեփով,
Ինչպէս մեր կանայք փոքրիկ չամչիկով.
Տունն ունի նաև անթիւ մաղարէք,
Այնտեղ են լցուած հարսն ու աղջկէրք,
Բոլորն էլ խոշոր, բոլորն էլ հսկայ,
Թէ մարդ թէ կնիկ, աղջիկ թէ տղայ.

Բայց չեն Տորքի պէս անտաշ ու անկազմ,
Այլ շատ գեղեցիկ և վայելչակազմ»...
—«Ուղիղ է ասածն Առան իշխանի,
Ասաց բդէշիը Գուգարաց երկրի.
Մեր հսկաներն էլ ձորերը մըտան,
Որ գզիրներին ոչինչ հարկ չըտան.
«Ով որ, ասում են, գզրի ձայն լըսի,
«Նա տեղն ու տեղը ձեան պէս կըհալչի.
«Մարդիկ էնդուր են այնչափ մանրացել,
«Ու մէջքներից թեքուել, կըռացել,
«Որ հարկ են տալիս գզրին ու քոխվին,
«Այն էլ դրամով, որ բնաւ չունին։
«Մենք չունինք գզիր, քեօխվա, քեաթխուդա,
«Էնդուր ենք մնացել այսպէս ածդահա»։
—«Բայց մի՞թէ իրանք դրամի պէտք չունին»,
Հարցրեց արքան Լօռու բդէշխին։
—«Դրամը պէտք է սնունդի համար,
Որ գնեն սնունդ և հագուստ յարմար.
Երկուսն էլ ունին. ունին վար ու ցան,
Ունին խոզ, ոչխար, լծկան ու կթան.
Ունին վուշ, բամբակ և որդ շերամի,
Զանազան ներկեր և որդն կարմրի.
Կանայք մանում են, ներկում ու գործում,
Սիրուն հագուստով զուքվում, զարդարվում.
Նոյնպէս հագցնում են բոլոր միւսներին,
Գործում են զորգ, շալ, և տան անկողին,
Եւ այլ ամենայն մանր ու խոշոր բան,
Ինչ որ գործվում է և պէտք է մի տան.
Ունին եզ ու մեղր և մածուն ու թան,
Միրգ, հունդ, արմտիք, բանջար զանազան.
Աղբիւրներ ունին վճիտ, սառնորակ,
Վիրաբուժութեան գիտեն դեղ, ճարակ.

Իսկ ինչ որ չունին և պէտք է իրանց,
Փոխանակելով տալիս են միմեանց.
Գինի և օղի նրանք չեն խմում,
Մոլութիւններից հեռու են փախչում.
Եւ ապրում էլ են նրանք շատ երկար,
Ոչ մէկը չըկայ հիւանդոտ, տկար:
Բոլոր անդամներն ամբողջ համայնքի,
Ջաւակ են կարծվում մի ընտանիքի.
Այսպէս միաբան, սերտ սիրով կապուած,
Մէկ մէկու համար գլուխ յետ դրած:
Շատ հիւրասէր են և մեծահոգի.
Խիստ աւանդապահ և առաքինի»...
—«Բայց մեզ ինչ օգուտ այդ հոկաներից,
Երբ որ փախչում են հարկահաններից»:
—«Հարկից խորշում են, բայց ոչ կռուելուց,
Ո՞չ հայրենիքի պաշտպան լինելուց.
Ունին ահագին աղեղ, պարսատիկ,
Կռիւ են գնում ինչպէս հարսանիք.
Քարեր ու նետեր կարկուտի նման
Թափում են կռուող թշնամու վրան.
Իսկ երբ քար ու նետ չունին ձեռներին,
Դիմում են իրանց ուժեղ կռներին.
Մէկը հարիւրին, տասը՝ հազարին,
Ջարդում են, ինչպէս գայլը՝ ոչխարին»:
—«Եթէ այդպէս է, ազատ թողեցէք,
Այդ հոկաներից էլ հարկ մի՛ առնէք.
Բայց «մէկ պայմանով», ասում է արքան,
Որ մեր քաջ Տորքին մի հարսնացու տան»:
—«Այդ շատ դժուար է, ասաց իշխանը,
Թէև կատարեն քո խիստ հրամանը.
Նրանց մէջ առանց մենամարտելու
Սովորոյթ չըկայ աղջիկ ուզելու.

Մրցել են տալիս փեսացուներին,
Որ աղջիկն ընկնի վերջին յաղթողին.
Բայց գործը դրանով դեռ չի վերջանում,
Յետոյ աղջիկն ու տղան են մրցում.
Եթէ փեսացուն չի յաղթում աղջկան,
Էլ այն աղջիկը չի գնում նրան»:
—«Ուղիղ մեր Տորքի երազի նման,
Ասաց խնդալով մեծաղօր արքան.
Մենք էլ կուղարկենք մեր հսկայ Տորքին,
Թող գնայ փորձէ իւր ուժն ահագին»...

Ф05-2008
3783
В150
41

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

1.

Այստեղ, ով դու Սէր, ով հին բարեկամ,
Տուր հոգւոյս թռիչք, որ ես կարենամ,
Նկարել չքնաղ պատկերդ երկնային,
Իմ թոյլ վրձինով՝ գրչով մարդկային:
ՀԱՅԿԱՆՈՒՇ, և... ՏՈՒԲՔ,—ինչ նմանութիւն,
Բայց սէրը չունի ոչինչ խորութիւն.
«Սէրը, ասած է, աթարին կրպաւ,
Ինչ արին, չարին, էլ պուկ չի եկաւ»:
Շատ անգամ առիւծ, արջ, օձ, բորենի,
Արծիւ ու ագռաւ և այլ կենդանի,
Փեսայ են դառնում սիրուն աղջկան,
Եւ առնում տանում իրանց բնակարան.
Բայց սովորաբար՝ այս դէպքի վերայ,
Նրանք դառնում են շատ սիրուն տղայ.

Ամբարիշտ սէրը կախարդուած անձին
Նորից տալիս է իւր դէմքն առաջին.
Թռչուն ու սողուն, ամեհի գազանք
Նորից առնում են մարդու կերպարանք:
Գեղեցկութիւնը արևի նման
Լուսաւորում է խաւար առարկան,
Իսկ սէրը քարշում շատ ճառագայթներ,
Սրտի հնոցում վառում է լապտեր:
Խփվում է աչքը, որ տեսնէ հեռուն,
Սիրտն է խօսողը, լռում է լեզուն.
Եւ այնուհետև երազներ պէս-պէս
Ուղեղի խորքում գալիս են հանդէս.
Սիրահար սիրտը թողում է գետինք,
Սիրոյ թևերով թռչում է երկինք. . .

2.

Ամառնամուտ է. Լոք սարն իւր գագաթ
Դաշտեցոց համար շինել է գրախտ.
Որ կողմ նայում ես՝ տեսում ես հրճուանք,
Ընմեղ, երկնային սիրոյ փաղաքշանք.
Ծաղիկներ գոյն-գոյն և անուշաբոյր
Տալիս են իրար քնքուշիկ համբոյր.
Անթիւ աղբիւրներ, վճիտ, սառնորակ,
Իրար գրկելով՝ մտնում են ձորակ.
«Սէր-սէր» է կանչում հովուի սրրինգ,
Կայտառում են ուլեր, խայտում են գառինք.
Այդ սարի գլխին կանգնած է ահա
Մի պանդխտական անծանօթ հսկայ.
Բայց ուրիշ մարդ չէ այդ նոր վիթխարին,
Այլ մեր բարեկամ Տորքն է ահագին.

Հսկայի առջև մինչև բիւր մրրոն
Բացուել է մի լայն, շրքեղ հորիզոն.
Նրա ոտքի տակ մեծամեծ լեռներ
Փռուած են ինչպէս աննշան թումբեր.
Հսկայն լեռների՝ Կովկասի շղթան,
Ինչպէս ցամաքի մի լևիաթան,
Գլուխը թաղել է Եւքսինեան ծովում,
Պոչը Վրկանայ ծովումն է շարժում.
Ահռելի մի պատ, բուսած անդունդից,
Մէջից կտրում է հարաւն հիւսիսից.
Ինչպէս մի քամար ալմաղ քարերով՝
Ձրջապատուել է գետնքի փորով.
Տես, Արևն ահա Վրկանայ ծովից
Իւր բոլոր շրքով ծագում է մօրից.
Նա իւր շափաղը, ցնցուղն առաջին
Սրփռում է Կովկաս հսկայի դէմքին.
Ի՜նչ տեսարան է, ինչքա՜ն փառահեղ,
Յափշտակուեցաւ մեր պանդուխտն ահեղ.
Այս տեսարանից վերացաւ հսկան,
Եւ իսկոյն չոքեց դէմ Արեգական.
Նա ահեղ ձայնով երգեց մի մաղթանք,
Լեռներ ու ձորեր տուին արձագանգ։

3.

Այստեղ մի հովիւ մօտեցաւ Տորքին,
Մի ոչխարակալ գաւազան ձեռքին.
Կարծես ուղարկեց նրան արեգակ
Մեր հսկայի մօտ իբրև հրեշտակ.
—Ո՞վ ես դու, ասաց, հսկայդ մեծազօր,
Եւ ո՞ւմ ես կանչում ձայնովդ հզօր.

—«Ես մի պանդուխտ եմ, ասաց մեր հսկան,—
Ինչպէս մոլորուած մի թափառական.—
Այս ի՞նչ երկիր է մեր առջևն ընկած,
Ի՞նչ աւաններ են դաշտ ու ձոր լցուած»։
—Ճշմարիտն ասած, ես լաւ չրգիտեմ
Սրանց անունը, որ մէկ-մէկ թուեմ.—
Եւ հովիւն անմեղ իւր գաւազանով
Ցոյց տուաւ Տորքին իրանց անունով
Մի քանի քաղաք և մեծ-մեծ աւան.
Թէ՝ «այն Գաջէնքն է և այն Մոշավան.
Իսկ այն քաղաքն էլ, որ երկար ու մէկ
Բողնոփորի մէջ ձգուած է բեկ-բեկ,
Յուրտաւ քաղաքն է՝ հարուստ, այգևէտ.
Իսկ այս էլ ահա ամրոցն է Ուփրէթ,
Որ պատկանում է մի շատ աննման
Եւ շատ գեղեցիկ մի որբ աղջկան։
—«Այդ ի՞նչ աղջիկ է, ի՞նչ է նրա անուն».
—Նրրա անունն է «Հայկանուշ-Սիրուն».
Ինքը մի չքնաղ և չնաշխարհիկ,
Ոչ ոք ծնուած չէ այնքան գեղեցիկ.
Նա աննման է, չափազանց սիրուն,
Դեռ չի լրացրել տասնևութ գարուն։
—«Միթէ նա չունի՞ ծնողք, ազգական,—
Հարցրեց յուզուած սիրահար հսկան։
—Բդէշխը նրանց Գաջէնք է տարել,
Մնացել են այնտեղ, էլ յետ չեն եկել։
—«Ուրեմն ո՞ղջ են նրանք Գաջէնքում.
—Ոչ, նրանք ողջ են գուցէ երկնքում։
—«Ուրեմն մեռե՞լ են, էլ նրանք չրկա՞ն.
—Եւ միշտ կրմեռնին, երբ սարը չրգան։
Ինչպէս է եղել, նրանք մէկ ամառ
Սարը չեն եկել, և դրա համար

Արևը նրանց ամբողջ գերդաստան
Զրկել է սարից, որ երբէք չըգան։
—«Բա ո՞վ է պահում այդ սիրուն աղջկան,
Եթէ նա չունի ոչ մի ազգական.
—Ուրիշներին էլ նա ինքն է պահում,
Ամեն կարօտեալ նրան է գիմում.
Ունի նաժիշտներ, անթիւ ծառաներ,
Մի նոյնքան շներ, բիւրաւոր հօտեր.
Նա մի հսկայ է, թէև ոչ քեզ պէս,
Հասակին նայես, սօսի է կասես։
Եւ շատ զօրեղ է, մեզանում չըկայ
Նրրա չափ ուժեղ և ոչ մի հսկայ.
—«Ինչո՞ւ ուրեմն մարդու չի գնում»։
—Իւր անուան վայել փեսայ չի գտնում.
Ասում են՝ շուտով նրա մօտ կըգայ
Հեռու աշխարհից մի մարդ աժդահա.
Այսպէս է երգել մի պանդուխտ գուսան,
Մեր Հայկանուշն էլ մնում է նրան։
Յուզուեցաւ Տորքը, երեսը փայլեց,
Պարզամիտ հովիւն անգամ նկատեց,
Որ կոյր գուսանի երգած աժդահան
Պէտք է որ լինի այս պանդուխտ հսկան.
—Երանի՜ նրրան, ասաց պատանին,
Ով Հայկանուշին կառնէ ամուսին.
Նա շատ բարի է և այնքան գրթած,
Որ մեր կանանց մէջ դեռ չի տեսնըւած.
Ով լծկան չունի, լծկան է տալիս,
Ճատերին լըծած գութան է տալիս,
Իւղ է, թէ պանիր, նա բոլոր տարին
Միշտ բաժանում է չունեցողներին։
—«Խնդրեմ ցոյց տաս ինձ, ասաց մեր հսկան,
Ուփրէթ գնացող կարճառօտ ճանապան։

—Այս ճանապան ահա թէ ուղիղ բռնես,
Դեռ կէսօր չեղած՝ Ուփրէթ կըհասնես։

4.

Մօտ է կէսօրը, ժամ է ճաշելու,
Փորի պահանջը լրացնելու.
Հայկանուշն այսօր շատ լաւ ճաշ ունի,
Լաւ ձուկ, լաւ խորոված, թէև անգինի.
Ճատ է ցանկանում, որ հիւր գայ իրան,
Թէկուզ երազում տեսած աժդահան։
Բերդի դռները բախում են ահա,
Եւ այդ բախողն է մի մարդ աժդահա.
Բախում է բախում, բայց չեն բաց անում,
Կարծես նրա հետ հանաք են անում.
—Սո՞ւտս, ձայն չըհանէք, դուռը չըբանաք,—
Ասաց տիրուհին, բայց... ա՜յ ձեզ հանաք.
Երկաթէ դուռը հսկան խորտակեց,
Ինչպէս գեչի թուղթ նրան ծալծլեց.
Եւ վեր բարձրացաւ քարէ սանդուղքով
Ինչպէս մի մանուկ մօրիցը խրոով.
Կամ ինչպէս աղքատ քաղցած ու տկլոր,
Սանդուխքի գլխին նստեց գլխակոր.
Աղախինները երբ Տորքին տեսան,
Սաստիկ վախեցած՝ փախան ներս մտան։
—Ինչո՞ւ էք վախում, ասաց տիրուհին,
Պէտք է հրաւիրել նորեկ հսկային։
Եւ ինքը գնաց Տորքին մօտեցաւ,
Եւ իբր ինքն իրան այսպէս խօսեցաւ.

—Ո՞վ պէտք է լինի արդեօք այս Հսկան,
Սա չէ՞ աժդահա Տորքը Պասքամեան.
Էլ ուրիշ ի՞նչ մարդ կարէր յանդգնել
Իմ բերդի դուռը այսպէս խորտակել»։
Տորքն էլ ըսկրսեց. իբրև ինքն իրան,
Տալ Հայկանուշին այսպէս պատասխան—
—«Երբ ճանաչում է Անգեղեայ Տորքին,
Դուռն ինչո՞ւ փակեց նրա երեսին.
Սա մի խաղ խաղալ միայն ուզեցաւ,
Եւ հետևանքն էլ այն էր, որ տեսաւ.
Տորքն ահա կերթայ, դուռը կըշտկէ,
Ինչպէս առաջ էր, այնպէս կըկողքէ»։
Եւ Տորքը գնաց դուռը լաւ կոփեց.
Սուր եղունգներով յղկեց ու կոկեց,
Ժանգոտած դուռը այնպէս պլպլաց,
Կարծես արծաթից լինէր նոր ձուլած։
Երբ նորից գնաց իւր տեղը նստեց,
Հայկանուշը նրան քաղցր աչքով նայեց.
—Ինչո՞ւ ես նստում, ասաց, չոր քարին,
Պէտք է լաւ ճաշ տալ քեզ պէս ճարտարին.
Ճանապարհորդ ես, քաղցած կըլինիս,
Թէ՞ հաց ուտելու ախորժակ չունիս»...
—«Քաղցած եմ, այո՛, բայց շա՛տ եմ քաղցած,—
Յոգոց քաշելով՝ մեր Հսկան ասաց.
Ի՞նչ հաց պիտի տաս, որ ես կշտանամ,
Ի՞նչ ջուր պիտի տաս, որ ես զովանամ.
Իմ հացն ու ջուրը,—գիտե՞ս որն է այն,
Քո սէրն է, Հոգիս, քո սէրն է միայն.
Մի՛ նայիր որ ես կոպիտ եմ ու բիրտ.
Այս կոպտութեան մէջ կայ մի քնքուշ սիրտ,
Որ քեզ գլխովին իւր մէջ կամփոփէ
Եւ միշտ քեզ համար միայն կըտրոփէ.

Ահա եկել եմ ընկել ոտքերըդ,
Կամ ինձ սպանիր, կամ տուր ինձ սէրըդ։
—Դեռ ժամանակ չէ, ասաց տիրուհին,
Յետոյ կըխորհինք քո սիրոյ մասին։—
—«Ես քո ըստրուկն եմ. դու ինձ հրամայիր,
Թէկուզ քո շան տեղ դրռանըդ կապիր,
Որ քեզ պահպանեմ աչքիս լուսի պէս,
Ոչ մի փորձանքի դու չըհանդիպես»։
—Դու ինձ կազատես շատ փորձանքներից,
Բայց ո՞վ կազատէ ինձ քո ճանկերից։—
Այս խօսքի վրայ Տորք և Հայկանուշ
Քա՛հ-քա՛հ խնդացին և խինդն էր անուշ.
Եւ իբրև վաղուց ծանօթ իրարու,
Կուշտ-կուշտ ճաշեցին, առանց ուտելու։

5.

Սիրում էր Տորքը, սիրում էր անկեղծ,
Սիրում էր սիրով անբիծ, անտխեղծ.
Եւ կոպտատարազ իւր դէմքը մըթին
Դառել էր սիրոյ ցոլացնող լուսին.
Այն կերպարանքը և հայեացքն ահեղ,
Որ քարացնում էր մարդկանց տեղնուտեղ,
Այժմ դառել է մի վճիտ աղբիւր,
Որից բղխում է սէր հեզահամբոյր...
Ի՞նչ քաղցր ժպիտ, ի՞նչ քնքուշ շարժուածք.
Ե՞րբ է ունեցել անճառնի կաղմուածք...

6.

Որքան կրակը վառվում է, այրում,
Այնքան տաքցողը հեռու է կանգնում.
Երբ վարուժանը շատ է կչկչում,
Մարին փախչում է, թուփի մէջ թաքչում.
Տորքն ինչպէս սոխակ երգում է պէս-պէս,
Իսկ Հայկանուշը լուռ է վարդի պէս.
«Այո», «ոչ», «գուցէ», երկդիմի խօսքով
Պատասխանում է անորոշ մրտքով:
Խոհեմութիւնը՝ յատուկ իւր սեռին՝
Իբրև մի սուր զէնք՝ պահում է ձեռին.
Եւ ասում է նա Տորքին վերջապէս.
—«Աղջիկ առնելը չի լինել այդպէս.
Դու շատ ուժով ես, այդ ես լաւ գիտեմ,
Բայց ինչ էլ լինիս, ես պէտք է կռուեմ:
Քո եղունգներդդ, այո, շատ են սուր,
Բայց ես էլ ունիմ վահլանի թուր,
Որին չի դիմնալ և ոչ մի հսկայ,
Թէկուզ նա լինի քեզ պէս ածգահա»...
—«Սիրուն Հայկանուշ, ասում է հսկան,
Արի մի անիր դու ինձ խելքահան.
Ես վախեցող չեմ և ոչ մի թրից,
Թէկուզ նա լինի ընկած երկնքից.
Բայց ինչպէս զօրէ իմ ձեռքը կոպիտ
Քնքուշ նազելուդ առնել իւր խրտիտ.
Խոստովանում եմ ինձ յաղթահարուած,
Ես քո գերին եմ, քո ոտքերն ընկած.
Դու քո փոխանակ ցոյց տուր հարիւրին,
Թէկուզ հազարին, տասը հազարին,
Հրամայիր ինձ՝ շարժեմ այս լեռը,
Ասա՝ պոկոտեմ ամբողջ անտառը,

Վարարած գետի ընթացքը փոխեմ,
Սարեր ու ձորեր իրար հետ խառնեմ,
Լեռներ կարող են իմ ձեռքով փլչել,
Բայց քեզ, Հայկանուշ, չեմ կարող դիպչել...
—«Եթէ այդպէս է, ուրեմն գնա
Եւ բեր ինձ համար քսան ածգահա.
Կերթաս Զորովոր, ուր քարայրերում
Քեզ պէս յաղթանդամ մարդիկ են կենում.
Եթէ նրանցից քսանին գերես,
Դրանով իմ անուան պատիւ կբերես.
Եթէ ոչ՝ գիտես մերոնք ինչ կասեն,
Ի՞նչ բամբասանքներ վրրաս կբարդեն.
Կասեն՝ փախցրել է, փախցրել է նրան
Լեռներից փախած մի թափառական. . .

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

1.

ՆԱՅ մեր Հսկան՝ ձեռքին մի գերան,
Որ գործ էր դնում իբրև գաւազան.
Բայց այստեղ պէտք էր մի յառաջաբան,
Թէ սա ինչ բան է և ինչի նման.
Հայկանուշն եթէ սիրում էր Տորքին,
Ինչու էր վտանգ դնում առաջին.
Ասում է՝ «դու ինձ պատիւ կըբերես,
Թէ գնաս քսան ածդահա գերես»:
Ածդահան ձուկ չէ, որ Տորքը բռնէ.
Անզօր ածդահէք որտեղ կըգտնէ.
Այս հանելուկը կըլուծուի ինքն իրան,
Եթէ մտածենք Հսկայի նման:

Մանըր մարդիկը չըգիտեն պատիւ.
Նախնեաց աւանդը չեն պահում խստիւ.
Էլ չեն հարցնում, թէ ինչ է կամ ով,
Դուցէ բռնուած են մի անյայտ ցանցով.
Օտարից անգամ չեն քաշվում, խորշում,
Խօսքմէկ են անում, իրար հետ փախչում.

. . . . . .

Մրոտող ձեռքը թշուառ թզուկի
Կարող չէ հասնել բարձր ճակատի:
Հսկաներն ունին պատուապահութիւն,
Դրբանից բարձր չունին սրբութիւն.
Ցեղի, սերնդի, օջախի պատուին
Թէ մեծ, թէ փոքր պէտք է զոհ լինին:
Էլ չըմեղադրենք մեր Հայկանուշին,
Եթէ նեղութիւն տուաւ նա Տորքին.
Այդ դժուար բան է դուցէ մեզ համար,
Իսկ Տորքի համար դա էր խաղ ու պար...

2.

Ինչպէս ասացինք՝ գնաց մեր Հսկան,
Որ գերի բերէ ածդահէք քսան.
Հասաւ Ձորափոր՝ Հսկաների մօտ,
Մտաւ մի խրամ խոր ու քարքարոտ.
Առիւծի նման այնտեղ մռնչաց,
Նրա ահեղ ձայնից ձորը դրբմբաց.
Դուրս եկան Հսկայքն իրանց բներից,
Խրամի ժայռի պատառուածներից.
Նայեցան տեսան մեր Հսկայ Տորքին
Ներքևում կանգնած, մի գերան ուսին.
Ձեռքով են անում:—Արի վեր մեզ մօտ,—
Ասում են Հսկայքն հիւրերի կարօտ:

Վերև բարձրացաւ մեր անհարթ հսկան,
Մտաւ ձորեցոց քարէ բնակարան։
Տան նահապետը՝ առոյգ ծերունին
Պատուով ընդունեց իւր պանդուխտ հիւրին.
Յատակի վրայ նոր գորգ փռեցին,
Եւ վերի ծայրին նրան նստեցրին.
Տան երեխէրքը՝ թէ մեծ, թէ փոքր,
Բոտեցան կարգով՝ ձեռքը պաչեցին,
Տաշտակը բերին ջահել հարսները,
Թաքուր լուացին հիւրի ոտքերը։
Մի բոպէ չանցած, մօտ հարիւր յիսուն
Հսկաներ եկան հիւրին տեսութիւն.
Խոր ու լայնարձակ ժայռէ մաղարան,
Դարձաւ հսկայից մի ժողովարան։
—«Բարո՛վ ես եկել, մեր աչքի լո՛յսն ես»,
Ամեն նոր մտնող ասում էր այսպէս։
«Դու ով ես կամ ինչ» էլ չեն հարցրնում,
Այս տեսակ կանոն չըկայ նրանցում.
Մինչև երեք օր հիւրին կըպատուեն,
Յետոյ այդ բանը նրան կըհարցնեն։
Ամբողջ երեք օր տօն կատարեցին,
Այնպէս փառաւոր հիւրին պատուեցին.
Մէկը բերում էր ձուկը նոր բռնած,
Միւսը մի քանի էրէ շալակած,
Մէկը վայրենի թռչուններ պէս-պէս
Միւսը տանում հաւ և մածնի երես.
Բոլոր համայնքը բերում էր սեղան,
Սեր ու արաժան, թխուածք զանազան։
Նուագում էին քնար ու սրինգ,
Պարում ու երգում տղայ ու աղջիկ.
Պար էին բռնում և պառաւ ու ծեր,
Այսպէս սէր, հրճուանք Տորքը տեսած չէր։

3.

«Երբ վայելեցի այսքան աղ ու հաց»,
Մեր Տորքն ինքն իրան այսպէս մտմտաց,
«Էլ ի՞նչպէս կարամ սրանց հետ կռուել,
Մէկի կամ միւսի մի մազին դիպչել.
Թող հայկանուշը այլ բան պահանջէ,
Եւ ոչ իմ եղբարց արիւնը ուզէ.
Ինչ որ կարող է մարդ անել սիրով,
Նոյնն անել կարող չէ նա իւր ուժով։
Թող ուժը լինի մարդուս օգնական,
Բայց սէրը լինի միշտ գործածական.
Այս մարդիկն ահա անխարդախ սիրով
Ինձ կաշկանդեցին սուրը աղ ու հացով։

4.

Չորս օրից յետոյ Տորքը բացուեցաւ,
Հսկաների հետ այսպէս խօսեցաւ.—
—Սիրելի եղբարք, չորս օր է անցել,
Բայց դուք իմ մասին բան չէք իմացել,
Թէ ի՞նչ պատճառով, ինչից ստիպուած,
Ես թափառում եմ սար ու ձոր ընկած։
Դուք ինձ ցոյց տուիք սէր, ուրախութիւն,
Քաջերի վայել հիւրասիրութիւն,
Աստուած շէն պահէ ձեր տուն ու տեղը։
Հաստատ պահէ ձեր սերունդն ու ցեղը.
Ձեզ մօտ եկել եմ ես մի խնդիրքով,
Պատմեմ ահա ձեզ մի քանի խօսքով.
Ուփրէթ բերդումը,—տեղեակ կըլինիք,—
Կենում է մենակ մի սիրուն աղջիկ,

Նրան ընտրել եմ ես իմ հարսնացու,
Ուզում եմ առնել առանց կռուելու.
Եկել եմ հիմա ձեր ոտքն ընկել,
Ձեր օգնութեանն ու խորհրդին դիմել.
Կամ ինձ մորթեցէք, թաղեցէք այստեղ,
Կամ եկէք գնանք ինձ հետ միատեղ.
Որ առանց կռուի առնենք մի աղջիկ,
Խաղաղ ու սիրով կատարենք հարսնիք»:
Լռեց մեր հսկան, խօսեց ծերունին.
—Տղերք, ասաց նա միւս հսկաներին,
Չին հէքիաթներում, լսած կըլինիք,
Երբ մարդուկները ուզում են աղջիկ,
Եւ այն աղջկան փախցնում են դէվեր,
Տանում մութ աշխարհ կամ մթին ձորեր,
Մարդուկն այնտեղից հանում է նրան,
Եւ դառնում նրա քաջագործ փեսան:
Մի մեծ պարծանք է, երբ թզուկ մարդիկ
Ուժով ու կռով առնում են աղջիկ.
Բայց ինչ պարծանք է, որ զօրեղ հսկան
Իւր ուժը ցոյց տայ ապագայ կնկան.
Դրա հակառակ՝ եթէ ցոյց տար սէր,
Այդ ճշմարիտ որ պարծանք կըլինէր:
Ես շատ հաւան եմ մեր հիւրի մտքին,
Այսպէս է վայել վեհանձն հսկային.
Մեր հայկանուշը չէ՛ մութ աշխարհում,
Եւ ոչ գերի է դէվերի ձեռքում.
Նա ինքնագլուխ, անկախ, ինքնիշխան,
Կենում է բերդումն իւր հայրենական.
Գնացէք ուրեմն քաղցրութեամբ, սիրով,
Ուրախ ու զուարթ, երգով ու պարով,
Առաջարկեցէք յամառ աղջկան,
Որ տեղիք չտայ մենամարտութեան:

Ես էլ ձեր ետքից խոնջացած ոտքով
Կըգամ օրհնելու պսակն իմ ձեռքով:
Թողէք ձեզ հետ գան տղերք, աղջկէրք,
Որ այնտեղ սարքեն գեղեցիկ պարերգ»:
Լռեց ծերունին, քարայրը թնդաց,
Գնա՞նք, հա՛յ գնանք,—ամեն ձայն գոռաց.
—Ես համաձայն չեմ,—գոչեց մի հսկայ,
Որ թինկն էր տուած մի ժայռի վրայ,—
Հայկանուշն ունի քսան փեսացու,
Մինը մէկէլից զօրեղ, ահարկու.
Այդ գաղանները գլուխ վեր առած,
Միշտ թափառում են սար ու ձոր ընկած.
Ծորոփորցիք են անխելք ու անբան,
Մարդավարութեան չունին հետք, նշան.
Ի՞նչպէս հասկացնենք այդ անմիտներին,
Որ քար չըձգեն երեխաներին.
Ես հաստատ գիտեմ, որ առանց կռուիլ
Անհնարին է, ոչինչ չի լինիլ»:—
—«Դուք ինձ պահ տուէք երեխաները,—
Պատասխանում է բարեսիրտ ծերը,—
Ես կըպահպանեմ սրանց անվնաս,
Ոչ մէկի գլխից չի պակսիլ մի մազ.
Մենք այսօր կերթանք բերդը կըմտնենք,
Իսկ դուք վաղն եկէք, մենք ձեզ կըսպասենք.
Եթէ հաւան էք դուք իմ ասածին,
Էլ մի արգելէք երեխաներին»:—
Փիր երեխէրքը այս որ լսեցին,
Ալեւոր պապի վզին փարուեցին.
«Պապի, մեզ ունենք շատ նեա ու աղեղ,
Կուզի՞ս զօրք կազմենք շատ քաջ ու ահեղ»:
Խնդաց ծերունին, ինքն էլ մանկացաւ,
Անզէն փոքրերին մի-մի զէնք տուաւ,

Որին նետաղեղ, որին պարսատիկ,
Որին մի կոպալ գլուխը հաստիկ,
Որին մի դաշույն, որին մի նիզակ,
Մէկին մի ձողի, միւսին մի մահակ.
Իսկ նուագածու երգեցիկ աղջկունք,
Վերցրին իրանց հետ փող, սրինգ, թմբուկ:
Երեխէրքն այսպէս մի զօրք կազմեցին,
Եւ իրանց պապին շրջապատեցին.
«Հա՜պա, Երեխէրք, մի՛ յառաջ, մի՛ յետ»,
Կանչեց Ծերունին իբրև զօրապետ.
Խնդացին բոլոր հսկայքն ահաւոր,
Երբ տեսին մանկանց բանակ զօրաւոր:

5.

Գնաց բանակը. կէսօրին ահա
Լուր եկաւ արդէն, որ բերդումն է նա.
Բերդումն ըսկսուեց սրինգ ու թմբուկ,
Եւ ամբողջ գիշեր բարձրացաւ աղմուկ.
Թնդաց Ուփրէթը, դղրդաց սար ձոր,
Եւ ձայնը հասաւ մինչև Ֆորոփոր:
Ֆորոփորեցի քսան աժդահա
Լոյսը չբացուած՝ եկել են ահա,
Բերդի պատի տակ իրարից հեռու
Ընթռել են իբրև գազան ահարկու:
Մերոնք էլ եկան Տորքի հետ մէկտեղ
Մինչև երեսուն հսկաներ ահեղ:
Ֆորոփորեցոց Տորքը բարևեց,
Ոչ ոք բարևին չըպատասխանեց.
—«Բարև՛ ձեզ, Եղբարք», կրկնում է Տորքը,
Որ տեսնի նրանց մարդութեան շնորհքը,

Դարձեալ լռութիւն, ոչինչ ձայն, ծպտուն.
Կարծես մարդիկ չեն, այլ համր անասուն:
—«Ես ազգականն եմ այս Հայկանուշի,
Եւ այսօր սրան պիտի տամ մարդի,
Եթէ դուք էլ էք փեսացուներից,
Պէտք է չըփախչիք ըմբշական մարտից.
Մէկը կըյաղթէ մէկել ուզողին,
Աղջիկը կըմնայ վերջին յաղթողին.
Եթէ ուզող էք, եկէք ներս գնացէք,
Աղջկայ առջև մենամարտեցէք»:
Ֆորոփորեցիք իսկոյն վեր թռան,
Եւ ներս խուժեցին փղերի նման:
Բոլոր հիւրերը բարձրացան վերև,
Իսկ ըմբիշները կանգնեցան ներքև.
Ամենից վերջը Տորքը վեր ելաւ,
Եւ Հայկանուշին գեկուցում տուաւ.—
—«Բացի հիւրերից եկել են ահա
Իրանց կամքովը քսան աժդահա,
Թող սրանք կռուեն, իսկ մենք կընայենք,
Եւ վերջինի հետ հաշիւ կըտեսնենք»:
—«Հիմա թողէք ինձ, ասաց Ծերունին,
Որ հասկացնեմ մեր այս քաջերին,
Ուղիղ կանոնը մենամարտութեան,
Որ արգելք չըլնին մեր ուրախութեան.
Եւ հասկացրեց, որ վիճակ ձրգեն,
Վիճակն ում ընկնի, նախ նրանք մրցեն:
Փողեր հնչեցին, թմբուկներ զարկին,
Եւ ըմբիշներին աշխուժի բերին.
Իսկ Հայկանուշը պատշգամբի վրայ
Նստած է իբրև մրցման առարկայ.
Երբ նայում են նրան փեսացուները,
Կրկնապատկվում է նրանց ուժերը:

Ահա երկուքը ասպարէզ մտան,
Կռուարար ցուլի ու գոմշի նման.
Պրտտեցին երկար, մինչև վերջապէս,
Իրար ճանկեցին երկու արջի պէս.
Մինը մէկէլից խիզախ, համարձակ,
Թնդաց զետինը նրանց ոտքի տակ.
Մերթ բարձրանում են, մերթ զետնին քսվում,
Մերթ գոմշի նման գլուխ գլխի զարկում.
Զոքում ու կանգնում, վայր ընկնում կրկին.
Ոչ մէկի մէջքը չի խփվում զետնին.
Ամբողջ երեք ժամ այսպէս կռուեցան
Եւ հետզհետէ աւելի տաքցան.
Իրար միս բռնած առիւծի ճանկով,
Գլորտում էին ինչպէս ագցանով.
Վերջն ինչպէս եղաւ՝ մէկը սայթաքեց,
Մէկելը նրան յաղթած համարեց,
Բայց ընկած հսկան վեր թռաւ կրկին
Եւ նորից բռնեց իւր ախոյեանին,
Բռնեց, բարձրացրեց, և այնպէս զարկեց,
Որ մէկ թզաչափ զետնի մէջ թաղեց:
Եւ նա յաղթուեցաւ, յաղթուեցաւ խպառ,
Մեռածի նման մեկնուեց շնչասպառ.
«Ապրիս, քաջ, ապրիս»,— հիւրերն ասացին,
Եւ յաղթող ըմբշին գովաբանեցին.
Բայց միւսներին էլ նա պիտի յաղթէր,
Որ նպատակին հասած համարուէր.
Եւ հեշտ չէր յաղթել բոլոր քսանին,
Նա հաղիւ յաղթեց միայն երեքին,
Հինգերորդ հսկան չորս հոգու յաղթեց,
Իսկ տասներորդը տասնին վայր ձգեց.
Անունն Աւագ էր, ամենից զօրեղ,
Սա պիտի յաղթէր և Տորքին ահեղ:

6.

Տորքը վեր կոչեց Աւագ հսկային,
Եւ նստեցրեց նրան իւր կողքին.
—«Դու եղար յաղթող, ասաց մեր հսկան,
Քեզ արժանի է պարգև պատուական.
Բայց դարձեալ մէկին դու պիտի յաղթես,
Որ մրցանակը լրիւ վաստակես.
Եթէ դու ինձ հետ կռուել չուզենաս,
Դարձեալ մեր այս տան փեսայ կըդառնաս.
Այս աղջիկներից մէկը քեզ կըտամ,
Եւ քեզ հետ սիրով եղբայր կըդառնամ»:
—«Իսկ Հայկանուշին դու ինքըդ կառնես,
Եւ խաղ ու պարով հարսանիք կանես.
Ես համաձայն չեմ. կրկռուենք մէկտեղ,
Թէկուզ դու լինիս ինձանից զօրեղ.
Թող Հայկանուշի համար ես մեռնիմ,
Բայց ոչ ուրիշի ամուսին լինիմ.
Կամ պէտք է յաղթել և կամ թէ մեռնել,
Յաղթահարութիւն չեմ կարող տանել»:—
—Յոգնած ես այսօր, դեռ հանգստացիր,
Ու ինձ հետ փոքր ինչ մօտ ծանօթացիր,
Եւ այնուհետև երբ որ ուզենաս,
Ինձ միշտ հրամանիդ պատրաստ կունենաս»:—
—«Զատ լաւ պայման է, ասաց ծեր հսկան,
Ձեր մրցութիւնը կըթողնենք վաղուան»:—
Ծեր հսկայի խօսքն ըմբիշն ընդունեց,
Եւ իսկոյն մի ճոխ սեղան պատրաստուեց,
Կանչեցին և միւս ժգաՀաներին,
Որ հացկերութին մասնակից լինին.
Կերան, կշտացան և զուարթացան,
Յոգնածութիւններն խպառ մոռացան:

7.

Ճաշելուց յետոյ Ծերունի Հսկան
Կանչեց ամենին մարմնամարզութեան.
Խաղեր խաղացին, խաղեր զուարճալի,
Բայց Հսկայական և շատ ահռելի.
Այս խաղերի մէջ մեր Տորք ածգահան
Զունէր ախոյեան հաւասար իրան.
Նա ցոյց էր տալիս ուժ այնքան ահեղ,
Որ բոլոր Հսկայք չունէին մէկ տեղ.
Գնդակ էր ձեռքին, թէ լախտ ահագին,
Կաշկանդել էր պէտք, թէ հրել մէկին.
Յատկելու խաղ էր, թէ վազ մի ոտքով.
Տորքն էր միշտ յաղթում, իսկ նրան՝ ոչով:
Երբ ուզում էին գնդակը խլել,
Թափվում էին վրան քսանից աւել.
Որը թիկունքին, որն ուսին նստում,
Մի քանի հոգի ոտքերից բռնում,
Բայց Հսկան այսպէս փղի պէս բարձուած,
Վազում էր ինչպէս ճանճահար եղած:
Իբրև կարգադրիչ Հսկայ Ծերունին
Խաղից հեռացրեց Անդեղ Հսկային.
—«Եկ ինձ մօտ նստիր, ասաց խնդալով,
Դու խանգարում ես սրանց քո խաղով:
Տորքը հեռացաւ, խաղն էլ վերջացաւ.
Բայց իսկոյն մի նոր հանդէս սարքուեցաւ.
Ծերունին արդէն տուել էր պատուէր,
Որ մէջ տեղ բերեն կաղնու թարմ ոստեր.
Տղայ ու աղջիկ եկան խմբովին,
Ճրջապատեցին մեր Տորք Հսկային.
Իսկ փոքրիկները Տորքի գիրկն ընկան,
Նրանց փայփայեց քնքշացած Հսկան.

Մի երգ երգելով ձայնով ներդաշնակ,
Կաղնու ոստերից հիւսեցին պսակ,
—Այս մէկ պսակը, ասաց Ծերունին
Պէտք է ընծայեմ Աւագ Հսկային:
—Ես արժանի չեմ, ասաց Աւագը,
Քանի որ մեր մէջ կայ հզօր Տորքը.
Նա բարձր է կանգնած ամեն նախանձից,
Այդ երևեցաւ հիմիկուան խաղից.
Սա մարմնեղէն չէ, այլ ժայռից կազմուած,
Կամ թէ՝ ով գիտէ՝ մարդ է, թէ՞ աստուած.
Մենք պաշտել միայն կարող ենք սրան,
Եւ ոչ թէ դառնալ ախոյեան մրցման:—
—Ես զարմանում եմ, ասաց Ծերունին,
Ծորովորեցիք այսչափ խելք չունին:
—Ծորովորցի չեմ, ասաց Աւագը,
Մեր գիւղն է Բողնու Երկաթահանքը.
—Այդպէս ասէիր,—ուրեմն հիմա՝
Ինչպէս Տորքն ասաց՝ կրդառնաս փեսայ,
Կընտրես քսանից որին կամենաս,
Եւ հզօր Տորքին եղբայր կրդառնաս:
—Դեռ ժամանակ չէ, երբ Տորքն ուզենայ,
Ես ուրախութեամբ կրդառնամ ծառայ:
Յուզուեցաւ Տորքը, իսկոյն վեր կացաւ,
Հսկայի ճակտին մի համբոյր տուաւ.
«Եղբայր ենք», ասաց և գգուեց նրան,
Ինչպէս գթոտ մայր իւր սիրուն մանկան.
—«Իսկ դու, Հայկանուշ, դարձաւ Ծերունին
Ուրախ ժըպիտով դէպի տիրուհին.
Ի՞նչ առիթ ունիս հիմա բերելու,
Միտք չունիս արդեօք մենամարտելու.
—Ես հնազանդ եմ, ինչպէս որ վճռես,
Կրմենամարտեմ, եթէ հրամայես.

—Ես կըհրամայեմ, որ մեր օրէնքով
Մրցէք իրար հետ, բայց... սիրոյ զէնքով.
Թող սէրը լինի ձեր զէնքը մի հատ,
Սիրեցէք միմեանց մինրդ միւսից շատ,
Դու նրան պաշտպան, նա քեզ պահապան,—
Ահա օրէնքը սուրբ ամուսնութեան:
Ծերունու առջև Տորք և Հայկանուշ
Զօքեցին ինչպէս երեխայք քնքուշ,
Կաղնի պսակներն առաւ ծերունին
Օրհնելով դրաւ երկուսի գլխին.
—Հապա, Երեխէրք, թմբուկ ու փողեր
Հնչեցէք մէկտեղ, թող թնդան ձորեր...

8.

Ըստ սովորութեան՝ հէքիաթի վերջում
Երկնքից երեք խնձոր է ընկնում.
Բայց մեր զրոյցի վերջումն այս անգամ
Վերևից եկաւ մի հզօր պատգամ:
Գուգարաց բդեշխն իւր այրուձիով,
Եկաւ արքայի հրովարտակով.
Ահա բաց արաւ մի երկայն գլան,
Մէջիցը հանեց գիրն արքայական.
Իւր այդ գրովը արքայն ինքնակալ
Տորքին շինել էր հզօր կուսակալ
Եւ իւր աշխարհի մասն արևմտեան
Յանձնել էր նորա կառավարութեան:
Կարդացին գիրը առանձին պատուով,
Տորքն էլ ընդունեց մեծ պատկառանքով:
Եւ այլ թանգագին ընծաներ պէսպէս,
Հանեց բդեշխը և բերաւ հանդէս.

Բերել էր մանեակ, գինդ, ապարանջան.
Գոհար ակներով մատնիք պատուական,
Կարմիր մաշիկներ մեր Տորքի համար,
Իւր նոր ստացած պաշտօնին յարմար.
Մի հոկայական սամուրէ մուշտակ,
Ոսկի և արծաթ մի հարիւր քսակ.
Իսկ Հայկանուշին՝ շղարշ ծիրանի,
Եւ արքայական յակինթ-մատանի.
Եւ մանրը մրժուր, պէս-պէս զարդարանք
(Թագուհուցն էին ուղարկուած նրանք):
Ինքը բդեշխը՝ մեծազանձ հարուստ,
Ընծայեց Տորքին խշխանի հագուստ:
Հոկայ հիւրերը մնացին ապշած,
Երբ տեսան Տորքին այսչափ մեծարած.
—«Ես ձեզ չասացի,—ասաց Աւագը,—
Որ ուրիշ բան է մեր զօրեղ Տորքը»:
Հարսնիքն ըսկսուեց մի նոր խնդումով,
Նոր զուարճութեամբ ու կերուխումով.
Արքայից եկած արծաթն ու ոսկին.
Յորդ անձրևի պէս տեղաց գլխներին...

ՀՍՍՀ-ՍՍՌՄ

Գիրքը ենթարկվել է ախտահանման
19.IV.197։

«Ազգային գրադարան»
NL0177913